ԱՆԴՐԱՆԻԿԸ՝ ՀԱՅԴՈՒԿ
(ծննդյան 125-ամյակի առթիվ)

Ս. Ս. ՀԱՄԲԱՐՅԱՆ

XIX դ. վերջին և XX դ. սկզբին արևմտահայերի դրությունը գնալով վատթարանում էր։ Սուլթան Աբդուլ Համիդ II-ը կազմակերպում էր հայերի պարբերական ու զանգվածային ջարդեր, սաստկացնում էր նրանց հալածանքները և դատապարտում բնաջնջման։ Օսմանյան իշխանությունները, համագործակցելով քրդական վերնաշերտերի հետ, խլում էին հայերի հողերը, սաստկացնում էին հարկային հարստահարումները, ուժեղացնում էին բռնությունները, չէին պաշտպանում նրանց անձն ու գույքը, որի հետևանքով ավազակային հորդաները հարձակվում էին խաղաղ ու անզեն հայկական գյուղերի վրա, կոտորում ու թալանում էին նրանց բնակիչներին, հափշտակում ունեցվածքը, առևանգում կանանց ու աղջիկներին։

Թուրք պաշտոնյաներն հալածում էին հայերի լեզուն, կրոնը, փակում էին դպրոցները, կուլտուր-կրթական հաստատությունները, արգելակում էին ազգային սովորույթները և կրոնական արարողությունները։ Նրանք չէին թույլատրում հայերին երթևեկելու գյուղից գյուղ, գյուղից քաղաք, իսկ կարգազանցներին պատժում էին։ Փաստորեն նրանք բանտարկել էին հայերին իրենց գյուղերում, ձգտելով դադարեցնել նրանց հարաբերությունները միմյանց հետ։ Միաժամանակ սուլթանական իշխանություններն աշխատում էին փոխել Արևմտյան Հայաստանի բնակչության ազգային կազմն ի վնաս հայերի, եկվոր թուրքերին ու քրդերին տեղավորելով հայերի տարածքներում և քայքայելով նրանց հավաքականությունը։ Այդ բոլորը, անշուշտ, խոչընդոտում էր օսմանյան բռնապետության դեմ արևմտահայերի զանգվածային ելույթները, համարյա բացառում էր դրանք։ Նման պայմաններում հայոց պայքարի քիչ թե շատ հնարավոր ձևը կարող էին լինել հայդուկային կամ ֆիդայական շարժումները։

XIX դ. վերջերին, հատկապես 90-ական թվականներին, Արևմտյան Հայաստանում հանդես եկան մի շարք հայդուկներ, որոնք իրենց կյանքը նվիրեցին մայր ժողովրդի պաշտպանության ու ազատության վսեմ գործին։ Նրանցից պետք է հիշատակել Արաբոյին, Սերոբ Վարդանյանին, Արմենակ Ղազարյանին, Գևորգ Ադամյանին, Անդրանիկ Օզանյանին, Սեբաստացի Մուրադին և շատ ուրիշների։ Հայդուկային շարժման մեջ ավելի նշանավոր դեր խաղաց Անդրանիկը։ Նա արևմտահայ ազատագրական պայքարի մեջ մտավ, իր իսկ ասելով, 1891 թ., այսինքն՝ 26 տարեկան հասակում, երդվելով «ազգին միշտ հավատարիմ մնալ»։ Այդ նույն թվին Անդրանիկը զինվորագրվեց հնչակյաններին, իսկ մեկ տարի հետո անցավ Հ. Հ. Դաշնակցության շարքերը։ Թուրքական իշխանությունների կողմից առաջին անգամ նա ձերբակալվեց իր հայրենի Շապին Գարահիսար գյուղաքաղաքում՝ 1891 թ., երբ ընդհարվեց հայազգի առևտրականներից մեկի հետ և նրան հասցրեց մարմնական վնասվածք։ Բանտում 27 օր մնալուց հետո Անդրանիկը հոր միջնորդությամբ ազատվում է և մեկնում Կոստանդնուպոլիս։ Այստեղ նա աշխատում է Թոփխանեի գործարանում, ուր արտադրվում էր «Թուրքաց կառավարության ամբողջ ռազմամթերքը» և շինում «հրացաններ շարելու տեղեր»։ Շուտով Անդրանիկը թողնում է Թոփխանեն, իսկ հետո նաև Թուրքիան և մեկնում Ռումինիա։ Այստեղ նա երկար չի մնում։ Իմանալով, որ Օսմանյան կայսրությունում նախապատրաստվում և իրագործվում են հայկական ջարդեր, 1895 թ. իր ժողովրդին պաշտպանելու համար Ռումինիայից գալիս է Անդրկովկաս, ապա անցնում Արևմտյան Հայաստան կամ, ինչպես ասում էին այն ժամանակ, Երկիր։ Նա միանում է Սերոբ Վարդանյանի (Աղբյուր Սերոբի) խմբին և մասնակցում հայկական մի շարք գյուղերի պաշտպանությանը։

Համիդյան դաժան հալածանքները շատ ֆիդայիների, այդ թվում նաև Անդրանիկին հարկադրում են դուրս դալ Երկրից։ Նա անցնում է Անդրկովկաս, լինում է Ալեքսանդրապոլում, Բաթումում. ապա մեկնում է Ղրիմ և հանգրվանում Յալթայում։ Որքան էլ գեղեցիկ էր Ղրիմն իր ծովով ու լեռներով, ծառաստաններով ու այգեստաններով, հրաշալի կլիմայով ու մաքուր օդով, այնուամենայնիվ, Անդրանիկը չէր հանգստանում։ Նա ուզում էր վերադառնալ դեպի հետ, դեպի հայրենիք, ուր իր ժողովուրդը կոտորվում ու բնաջնջվում, խոշտանգվում և խեղվում էր։ Նա ուզում էր պայքարել համիդյան վայրագությունների դեմ և տարաբախտ մարդկանց փրկել ջարդերից։ 1897 թ. մայիսին Անդրանիկը դուրս եկավ Սևաստոպոլից, մեկնեց Անդրկովկաս, հուլիսի 22-ին մտավ Թուրքիա և բազմաթիվ դժվարություններ հաղթահարելով հասավ Սասուն։ Այստեղ Աղբյուր Սերոբն ու Հրայրը, վերակառուցելով հայդուկային գործերը, նրան նշանակեցին տասնապետ։

Անցնելով տասնյակի գլուխ, Անդրանիկը սկսեց կատարել մի շարք ժողովրդանպաստ գործեր։ Այսպես, 1890-ական թվականների կոտորածներից հետո սուլթանական կառավարությունը հայկական գյուղերում նշանակեց պահապաններ (ղոլչիներ)՝ իբր թե բնակիչների պաշտպանության համար։ Իրականում նրանք ապրելով հայերի հաշվին, լրտեսում էին նրանց, իշխանություններին հաղորդում զանազան լուրեր։ Անդրանիկն ահաբեկեց այդ ղոլչիներին և վռնդեց գյուղերից։ Հետագայում նա հուշագրում էր, որ նրանցից «շատ շատեր հեռացան իրենց պաշտոններեն մեր սպառնալիքներեն վախցած»[1]։ Հայդուկապետը միաժամանակ զսպում էր ցեղապետերին ու աղաներին և մեղմում հայ գյուղացիների կեղեքումները։ Նրանցից շատերը, երկյուղելով Անդրանիկից, չէին համարձակվում ստրկացնել հայ գյուղացիների նոր զանգվածներ կամ սաստկացնել արդեն իրենց իշխանության տակ ընկածների հարստահարումները։

Անդրանիկը վճռում էր նաև գյուղացիների միջև եղած վեճերը և այնպես արդար էր լուծում, որ նրանք թողնում էին պաշտոնական դատարանները և դիմում իրեն։ Այսպես, Կծվակ գյուղում մի պառավ կին գանգատվում է, որ իր ապրուստը, մին ու ճար կովը գողացել են, չգիտի, թե ով է հանցագործը։ Անդրանիկը ռեսին (գյուղապետին) առաջարկում է բնակիչներից հավաքել 30 փութ ցորեն և իբրև կովի գին տալ տուժողին։ Ռեսը պատասխանում է, թե մի բուռ էլ չի տա, ով գողացել է, թող նա էլ տա։ Անդրանիկի առաջարկությամբ կատարվում է խուզարկում և կովի կաշին հայտնաբերվում գյուղապետի տանը։ Նեղն ընկած ռեսը հայդուկապետին աղաչում է, թե 30-ի փոխարեն պառավին կտա 60 փութ ցորեն, միայն թե ոչ ոք չիմանա իր հանցագործության մասին, մանավանդ Աղբյուր Սերոբը։ Բայց Անդրանիկը մերժում է նրա խնդրանքը և մերկացնում գողին[2]։

Անդրանիկը խտրություն չէր դնում ազգությունների միջև, պաշտպանում էր ինչպես հայ, այնպես էլ այլազգի գյուղացիների շահերը։ Այսպես, հայկական Տափրկ գյուղում հաստատված մի քուրդ ռամիկ գանգատվում է Անդրանիկին, որ իրեն թալանել են Գելիեգուզանի երիտասարդները, դիմել է օսմանյան պաշտոնյա Սալե աղային, որը հրաժարվում է գործի քննումից, ասելով, թե աստված գելիեգուզանցիներին հոգի է տվել. բայց չի կարողանում առնել, ուր մնաց, որ ինքը նրանցից թալան հետ բերի։ Անդրանիկն այդ գյուղի երիտասարդներին առաջարկում է վերադարձնել քրդից թալանվածը, որը և կատարվում է[3]։ Այդպիսի փաստեր էլի կարելի է բերել, բայց սահմանափակվենք դրանցով։

1900 թ. Անդրանիկը որոշեց վրեժխնդիր լինել Սերոբին գլխատող Բշարե Խալիլից։ Այդ ոճրագործը ազգությամբ քուրդ էր՝ խրզընցի քրդերի աշիրեթապետը (ցեղապետ)։ Նա իր ղուլամներով մտել էր սուլթանի ստեղծած համի-

---

1 Առաքելոց վանքի կռիվը, պատմեց զորավար Անդրանիկ, գրի առավ Լ. Կ. Լյուլեճյան, Պոսթոն, 1924, էջ 14։

2 Անդրանիկի հուշերը, Պեյրութ, 1935, էջ 99։

3 Նույն տեղում, էջ 329։

դիե գնդերի մեջ, նվիրված ծառայում էր բռնակալին, պայքարում հայ ազատագրական շարժումների դեմ, հետապնդում էր հատկապես հայդուկներին և ձեռք գցելիս հաշվեհարդար տեսնում նրանց հետ։ Նա հիմնովին ավերել էր Սպաղանք գյուղը, նրա բնակիչներին եկեղեցում այրել, կործանել էր Հեթինկը, գնդակահարել նրա երիտասարդներին, գլխատել էր Աղբյուր Սերոբին և գլուխը ցցին ամրացնելով տարել Մուշ և ցուցադրել քաղաքում։ Բացի այդ, Բշարե Խալիլը դաժանորեն հարստահարում և ճնշում էր իր իշխանության տակ ընկած հայ գյուղացիներին, հափշտակում նրանց վաստակը։ Այնպես որ Բշարե Խալիլի հանցանքը մեծ էր և նրան պետք էր պատժել։ Բայց նրան պատժելը հեշտ չէր. զգույշ էր ու խորամանկ, շրջում էր զինվորներով և օգտվում թուրքական իշխանությունների հովանավորությունից ու պաշտպանությունից։

Խալիլին պատժելու պարտականությունն իր վրա վերցրեց այդ օրերին հոդացավով տառապող Անդրանիկը։ Նա սկսեց հետևել ոճրագործին, ստանալով տեղեկություններ, թե նա ե՞րբ, ի՞նչ ուժերով, ո՞ւր է գնալու։ Եվ ահա 1900 թ. հոկտեմբերին Անդրանիկին հաղորդեցին, որ Խալիլը ներքին Մարնիկի բնակիչներից բեշ (բահրա) է հավաքում, որ գյուղից դուրս կգա հաջորդ օրը՝ իր հավաքած բեռներով, ոստիկանների ուղեկցությամբ և կգնա Խաչուլարա սարի ճանապարհով։ Անդրանիկն իր հայդուկներով դարանակալեց, որոշելով կենդանի բռնել նրան։ Օրվա երկրորդ կեսին, երբ Խալիլը երևում է, վրիժառությունից արբեցած սպաղանցի Մակարը, խախտելով կարգապահությունը, կրակում է նրա վրա, բայց վրիպում է։ Հայդուկները գետին են տապալում նրա ձիուն։ Խալիլը փորձում է ճողոպրել, սակայն Անդրանիկն իր ընկերներով բռնում է նրան, հարցաքննելով թվարկում մեղքերը, գլխատում և վերցնելով գլուխն ու բեռները, գնում Սասուն։ Հայդուկները ավարը տալիս են գյուղացիներին, իսկ գլուխն ուզում են ամրացնել ցցին, թղթի վրա մեկ առ մեկ գրել Խալիլի կատարած ոճրագործությունները, թուղթը կախել կզակից և ցուցադրել Մուշ քաղաքում։ Բայց Մշո հոգևոր առաջնորդ Բաբկեն վարդապետը խորհուրդ չի տալիս, ասելով, թե թուրք խուժանը շատ կգրգռվի և նոր կոտորածներ կանի։

Հայդուկները հաշվեհարդար տեսնելով Խալիլի հետ, լուծեցին հայ ժողովրդի վրեժը, կատարեցին նրա հրամայական պահանջը։ Եվ պատահական չէ, որ ոճրագործի սպանության համար, ինչպես վկայում է Անդրանիկը, «ամբողջ Սասունի և դաշտի ժողովուրդը ուրախության մեջ էր»[4]։ Հայդուկի սերը հորդառատ է, ատելությունը՝ անսահման, իսկ վրիժառությունը՝ դաժան։ Եվ դա չի կարող այլ կերպ լինել, քանզի հայդուկը իր ժողովրդի զգացմունքների, իղձերի ու ցանկությունների արտահայտիչն է։ Նա սիրում է իր հայրենիքը այնպես, ինչպես ժողովուրդը, ատում է բռնակալներին ու դահիճներին այնպես, ինչպես ժողովուրդը և հաշվեհարդար է տեսնում նրանց հետ այնպես, ինչպես կուզենար ժողովուրդը։

Բշարե Խալիլի սպանությունից հետո Անդրանիկը կազմակերպեց սասունցիների դիմագրավումը կառավարության ոտնձգություններին։ Բանն այն է, որ 1901 թ. ապրիլին մշեցի Սալիբ աղան դիմում է Սեմալի ու Շենքքի բնակիչներին, ասելով, որ եթե նրանք պահանջեն, որ կառավարությունն իրեն նշանակի Սասունի կայմակամ, ապա գավառի բոլոր բանտարկյալներին ազատել կտա, հետ կբերի տարագիրներին ու փախստականներին և կարգելի քրդական աշիրեթների ասպատակությունները։ Դժվար է ասել, թե ով էր այդ խաղի հեղինակը։ Համենայնդեպս այն հրապուրիչ էր, և սասունցիները գայթակղվեցին։

Նրանք կատարեցին Սալիբ աղայի ցանկությունը, որն իսկույն նշանակվեց կայմակամ։ Շուտով նրա հետևից եկան 1600 զինվոր, որոնք կառավարության հանձնարարությամբ Սեմալում, Շենքքում և Տալվորիկում սկսեցին կառուցել զորանոցներ։ Գյուղացիների բողոքին նորաթուխ կայմակամը պա-

4 Նույն տեղում, էջ 236։

տաբանեց, թե դա կառավարական միջոցառում է, և ինքն անկարող է արդիլել։

Իմանալով այդ մասին, Անդրանիկը սասունցիներին առաջարկեց դիմադրաբել իշխանությունների ձեռնարկմանը, քանզի այն ուղղված է իրենց դեմ, նպատակ ունի ճնշել ազատագրական մաքառումները։ Անդրանիկի այդ պրոպագանդը հասավ իր նպատակին։ Շուտով ամբողջ Սասունը ոտքի կանգնեց և խնդիր դրեց. «կամ բոլորս ալ կմեռնինք, կամ չենք ընդունիր, որ զորանոցներ շինեն»[5]։ Գյուղացիների համառ դիմադրության շնորհիվ իշխանությունները հրաժարվեցին իրենց նպատակից։

1890-ական թվականների ջարդերից հետո ամենուրեք տիրապետում էին նյութական աղքատությունն ու խեղճությունը, հոգեկան ընկճվածությունն ու հուսահատությունը։ Շատ հայեր ուզում էին դավանափոխ լինել և ընդունել ուղղափառություն, որ օգտվեն Ռուսաստանի հովանավորությունից ու պաշտպանությունից։ Անհրաժեշտ էր կազմակերպել մի արդյունավետ գործողություն. մեռած սրտերը, ինչպես կասեր Վահան Տերյանը, կյանքի կոչել ու դուրս բերել նրանց նոր պայքարի, ապացուցելով, որ հայ մարդիկ չեն կարող համակերպվել ստեղծված իրավիճակի հետ, պատրաստ են վերստին շարունակել իրենց ազատագրական պայքարը։ Պետք էր զսպել օսմանյան կեզեքիչներին, դիմագրավել նրանց ու ցույց տալ հայ ազգի կենսունակությունը, պաշտպանել նրա արժանապատվությունը։

Այդ նպատակով Անդրանիկը 1901 թ. հոկտեմբերին հայդուկներին հրավիրեց խորհրդակցության։ Մտքերի փոխանակումից հետո որոշեցին մտնել Առաքելոց վանքը և կռիվ սկսել կառավարության դեմ։ Այդ վանքը գտնվում է Մուշից արևելք, ուներ ստրատեգիական հարմար դիրք, բարձր պարիսպներ, ամուր դռներ ու պատեր։ Եվ Անդրանիկը 1901 թ. հոկտեմբերի վերջին իր 22 զինվորներով խրամատավորվեց Առաքելոց վանքում։ Շուտով եկան ևս 8 հոգի և հայդուկների թիվը հասավ 30-ի։

Նոյեմբերի 3-ին թուրքական հարյուրապետը, անցած 16 զինվորների գլուխ, շարժվեց դեպի վանք և պահանջեց հանձնվել, սակայն մերժում ստանալով, հետ վերադարձավ։ Նոյեմբերի 4-ին վանքի պատերի տակ երևացին ավելի մեծ թվով զինվորներ և հայդուկներին առաջարկեցին հեռանալ վանքից։ Բայց սրանք ևս մերժվեցին։ Նոյեմբերի 5-ին թուրքական գումարտակը պաշարեց վանքը, իսկ նոյեմբերի 8-ին պատարող զինվորների թիվը հասավ հազարների։ Նոյեմբերի 17-ին նրանք անցան հարձակման, բայց, հանդիպելով ֆիդայիների պատասխան կրակին, հետ քաշվեցին։ Նույն օրը թուրքական հրամանատարությունը հարցագիր ուղարկեց հայդուկներին՝ «Ի՞նչ կուզեք, ի՞նչ է ձեր պահանջն ու նպատակը»։ Անդրանիկը պատասխանեց, որ ինքը չի կարող իր ասելիքը հայտնել գրավոր, քանզի երկար է, թող «Ֆերիգ ու Ալի փաշաները Պիթլիսի կուսակալին հետ հոս գան և այն ատեն բերանացի կըսեմ իմ ըսելիքները»[6]։ Դա չկատարվեց։

Նոյեմբերի 19-ին, գիշերվա ժամը 3-ին, թուրքերը վերստին հարձակման անցան, բայց արդյունքի չհասնելով լուսադեմին դադարեցրին կրակը։ Նոյեմբերի 23-ին թուրքական հրամանատարությունը ուղարկեց հատուկ պատգամավորություն՝ բաղկացած թուրք երևելիներից և Մուշի առաջնորդ Խոսրով ու վանահայր Հովհաննես վարդապետներից, որոնք կրկնեցին նախկին հարցումը։ Անդրանիկը նրանց ներկայացրեց իր պահանջները, այն է՝ ներել բոլոր հայ քաղաքական բանտարկյալներին, պետական տասանորդի հավաքման իրավունք տալ իրենց՝ գյուղացիներին, պաշտպանել հայերի անձն ու գույքը, հայկական գյուղերն ազատել քրդական ավատական լծից, վերացնել ֆեոդալական պարհակները և աղաների օգտին հայերի կողմից կատարվող վճարումները, հայդուկներին չանվանել ավազակներ, քանի որ նրանք ոչ ոքի չեն թալանում, պատժում են միայն եղեռնագործ պաշտոնյաներին ու աղաներին, ցրել համիդիե դնդերը, որոնք «պահված են միմիայն հայուն պատու-

5 Նույն տեղում, էջ 266—267։

6 Առաքելոց վանքի կռիվը, էջ 37։

հաս դառնալուն»[7] և, վերջապես, դադարեցնել հայերի հալածանքներն ու հետապնդումները։

Այդպիսով, հայդուկապետն առաջադրում էր սոցիալ-տնտեսական ու քաղաքական լուրջ խնդիրներ, գյուղացիական-դեմոկրատական պահանջները։ Նահանգական իշխանությունները, ստանալով Անդրանիկի պահանջները, փորձեցին խաբեությամբ նրան ծուղակը գցել, հայտարարելով, թե դրանք բոլորն ընդունելի են և կկատարվեն, բայց «բեֆորմները մի օրով. մի շաբաթով չեն կրնար գործադրվել, հարկավոր է առնվազն 6 ամիս»։ Ապա ավելացրին, որ Կ. Պոլսի պատրիարքն այդ հարցով դիմել է մեծ վեզիրին։ Նրանք երկուսով խնդրել են սուլթանին և «նա խոստացած է ամեն բան կարգադրել, նաև ձեզի համար ներում շնորհած է, անձնատուր եղեք»[8]։ Սակայն Անդրանիկը հասկացավ նրանց խաբեությունը և պահանջեց իրական հրաշխիքները, այլապես «մենք պատրաստ ենք կռվելու»[9]։

Նոյեմբերի 24-ին թուրքերը վերսկսեցին հարձակումը, բայց դարձյալ հաջողության չհասան։ Հայդուկները վարպետորեն պաշտպանվում էին և վանում թշնամու զինվորներին։ Սակայն նրանց զինապաշարը վերջանում էր, այլևս չէր կարելի շարունակել կռիվը, պետք էր անհապաղ հեռանալ, մանավանդ թշնամու բանակում մոլեգնում էին տարափոխիկ հիվանդությունները, որոնք կարող էին թափանցել վանք։ Անդրանիկը կազմեց հայդուկներին թշնամու պաշարումից դուրս բերելու մի գերազանց պլան, մարզեց նրանց այդ պլանով և բոլորին հագցնելով ձյան վրա աննկատ դարձնող ճերմակ զգեստ, նոյեմբերի 27-ին, գիշերվա ժամը 3-ին ֆիդայիներով թողեց վանքն ու շարժվեց իր իսկ խոսքերով ասած՝ «վտանգներով լի անորոշ կայաններ»։ Ճանապարհին նա խաբեց թուրք զինվորին, ներկայանալով նրան որպես օսմանյան բանակի հարյուրապետ, և հայդուկներն անհետացան գիշերային խավարի մեջ։ Երբ բոլորը հեռացան, շփոթված զինվորը միայն նոր հասկացավ բանի էությունը և սկսեց բղավել. «ճան ֆեդայիները փախան»[10]։ Հետևեցին զինվորների համազարկերը, բայց արդեն ուշ էր։

Շուտով Անդրանիկն իր հայդուկներով հասավ Սասուն, ուր գյուղացիները նրանց դիմավորեցին մեծ խանդավառությամբ։ Հետագայում նա հուշագրում էր, որ անկարելի է նկարագրել նրանց դիմավորումը։ Գյուղացիները բերկրանք էին ապրում, նրանց կանայք կաթսաներով կերակուրներ էին պատրաստում, որ հյուրասիրեն հավաքվածներին։ «Քսան օր 6000 զինվորներու հետ կռվող խումբ մը քաջեր կհյուրասիրվեին իրենց հայրենակիցներեն սիրալիր և խնդումներես։ Բերկրանք մըն էր տեսնել հայ գյուղացին այդ խանդավառության մեջ, հրճվանք էր տեսնել նաև հայ հարազատ զինվորները իր հաղթանակին մեջ։ Ամենքը ուրախ և զվարթ էին»[11]։

Հատկանշական է, որ Անդրանիկի հաջողություններով գյուղացիները ուրախանում էին նաև Մշո դաշտում։ Զորավար Սմբատը պատմում է, որ Առաքելոց վանքի կռվից հետո, երբ ինքն ու իր հայդուկները եղել են Վարդենիսում, տեսել են, որ «Գյուղացիները խրախճանքի մեջ էին։ Կերգեին, կպարեին։ Գյուղը տոնական կերպարանք ստացեր էր», վանքի կռվի հաղթանակը «գինովցուցեր էր զիրենք»[12]։

Անդրանիկը սուլթանական զոլջիներին վռնդելով հայկական գյուղերից, պատժելով ոճրագործ Բշարե Խալիլին և հաջողությամբ դուրս գալով Առաքելոց վանքի թշնամու պաշարումից, մեծ անուն հանեց ոչ միայն հայերի, այլև քրդերի մեջ։ Նրա հռչակը տարածվեց թե՛ Տարոնում և թե՛ Վասպուրականում ու Հայաստանի այլ վայրերում։ Ժողովուրդը սկսեց հայդուկա-

---

7 Նույն տեղում, էջ 46։

8 Անդրանիկի հուշերը, էջ 292։

9 Նույն տեղում։

10 Առաքելոց վանքի կռիվը, էջ 62։

11 Նույն տեղում, էջ 69—70։

12 Մկրտիչ Երիցյան, Զորավար Սմբատի հուշերը, Փարիզ, 1936, էջ 123։

պետի մասին հորինել երգեր ու փառաբանել նրա քաջագործությունները։

Սակայն Անդրանիկի ավելի մեծ սխրագործությունը Սասունի 1904 թ. գոյամարտի ղեկավարումն էր։ Ինչպես XIX դ. վերջին. այնպես էլ XX դ. սկզբին Սասունն արևմտահայ ազգային-ազատագրական պայքարի առաջնակարգ օջախներից էր։ Այստեղ էին հավաքվում ֆիդայիները և զորավիգ լինում լեռնականներին՝ թուրք պաշտոնյաների ոճրագործությունների ու քրդական ներխուժումների կամ կեղեքումների դեմ։ Աբդուլ Համիդը, գիտենալով այդ մասին, ուզում էր արյան նոր հեղեղներ առաջացնել Սասունում, կոտրել տեղացիների ազատատենչ կամքը և բնաջնջել ֆիդայիներին։ Տևական նախապատրաստումից հետո օսմանյան կառավարությունը 1904 թ. ապրիլին զորամասեր շարժեց սասունցիների դեմ։ Նրանց միացան համիդիական մի շարք գնդեր։

Անդրանիկը և իր զինակիցները, իհարկե, նախապես գիտեին այդ մասին. ուստի ձեռնամուխ եղան Սասունի ինքնապաշտպանությանը։ Հայդուկապետը մարտական ուժերը տեղաբաշխեց տարբեր ճակատներում, նշանակեց այդ ճակատների հրամանատարներ, ապահովեց սննդի ու ռազմամթերքի մատակարարման գործը, այնուհետև բանագնացներ ուղարկեց հարևան քրդերի մոտ՝ նպատակ ունենալով նրանց գոնե չեզոքացնել։ Սակայն դա չհաջողվեց, քանի որ սուլթանը կաշառել էր քրդերի ցեղապետերին ու դարձրել իր կամակատարները։ Նրանք պրովոկացիաներ էին սարքում, որ կառավարական զորաջոկատները հարձակվեին սասունցիների վրա և կոտորեին։ Այդպիսի մի քայլ նրանք կատարեցին 1904 թ. ապրիլի 2-ին, երբ հարձակվեցին Սասնա Գելիկնման հայկական գյուղի վրա, ցանկանալով առևանգել քահանայի աղջկան։ Անդրանիկը հակահարված հասցրեց հրոսակներին, նրանցից սպանելով շուրջ 30 հոգի և փրկեց աղջկան[13]։ Թուրքական իշխանություններն օգտագործեցին այդ հանգամանքը և զորամասեր ուղարկեցին լեռնականների դեմ։

Մեր նպատակից դուրս է հանգամանորեն նկարագրել Սասունի 1904 թ. գոյամարտը[14]։ Նշենք միայն, որ Անդրանիկի ու նրա զինակիցների հմուտ գործողությունների շնորհիվ լեռնականները ցուցաբերեցին համառ դիմադրություն. մի քանի անգամ հետ շպրտեցին թշնամու գերազանց ուժերը, մեր դարավոր պատմության մեջ գրելով արիության ու խիզախության փայլուն էջեր։ Սակայն սուլթանի մեծաթիվ զորքերի ու համիդիական գնդերի առաջ հայդուկների պարտությունն անխուսափելի էր։ Աբդուլ Համիդը հասավ իր նպատակին, Սասունում իրագործելով հայոց նոր ջարդեր, սակայն չկարողացավ Սասունը դատարկել հայերից։ Նա ուզում էր ձեռք գցել Անդրանիկին ու հաշվեհարդար տեսնել հայդուկապետի հետ՝ դիտելով նրան որպես անզիջում թշնամու և սասնահայոց ազատագրական պայքարի կազմակերպչի ու ղեկավարի։

Սուլթանը փորձեց իր նպատակին հասնել կաշառատվությամբ։ Նա այն կարծիքին էր, որ կաշառքն ամենազոր է, որ աշխարհում անկաշառ մարդ չկա։ Ուստի հայտարարեց, թե ով կբերի Անդրանիկի գլուխը, մեծ գումար կստանա։ 1904 թ. հուլիսի 7-ին Բիթլիսում ռուսական հյուպատոս Վ. Շիրկովը հաղորդում է Կ. Պոլիս՝ իր դեսպանին, որ Անդրանիկին բռնելը Բիթլիսի վալիի հատուկ հոգսն է. ասում են, որ նա կաշառել է 300 հայի, որոնք, հանդես գալով որպես փերեզակներ, պետք է շրջեին գյուղերը և գտնեին այդ հեղափոխականին։ Բայց վալին արդյունքի չի հասնում։ Նա գանգատվում էր, որ բնակիչները թաքցնում են Անդրանիկին, չեն հանձնում նրան իշխանություններին[15]։

---

13 Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվ (այսուհետև՝ ՌԱՔԱ), ֆ. Քաղարխիվ, 1904, ց. 482, գ. 713, թ. 18։

14 Այդ մասին հանգամանորեն տես մեր հոդվածը՝ «Սասունի 1904 թ. գոյամարտը» (Պատմա-բանասիրական հանդես, 1989, № 4)։

15 ՌԱՔԱ, ֆ. Կ. Պոլսի դեսպանությունը, գ. 1399, թ. 49։

Նույն թվի հուլիսի 17-ին «Մշակը» հաղորդում էր, որ ըստ եվրոպական թերթերի, Անդրանիկի գլուխը սուլթանը գնահատել է 1000 լիրա, այսինքն՝ ռուսական փողով 8500 ռուբլի[16]։

Բայց փորձը ցույց տվեց, որ սուլթան Համիդը սխալվում էր, անկաշառ մարդիկ կային, որոնք իրենց խիղճն ու պատիվը, իրենց սիրելի հերոսին չէին փոխի կամ վաճառի ոչ մի գումարով։

Տեսնելով, որ կաշառատվությամբ չի կարողանում հասնել իր նպատակին, սուլթանն Անդրանիկին հռչակեց քաղաքական հանցագործ և պահանջեց, որ ներկայանա դատարան և պատասխան տա իր «հանցագործություններին» համար, հակառակ դեպքում, ինչպես հաղորդում էր Վ. Շիրկովը՝ վկայակոչելով Բիթլիսում հրատարակվող «Բիթլիս» թերթի 1904 թ. դեկտեմբերի 6-ի պաշտոնական հայտարարությունը, Անդրանիկի հանդեպ կկիրառվի օսմանյան օրենսգրքի 371-րդ հոդվածը[17], որն ամենադաժան պատիժ սահմանող հոդվածներից էր։

Անդրանիկը, իհարկե, արհամարհեց բռնակալի սպառնալիքներն ու խարդավանքները և շարունակեց իր ժողովրդանվեր գործունեությունը։ Սասունի գոյամարտից հետո՝ 1904 թ. հուլիսի 5-ին (18-ին) նա Սահրադի (Գեվորգ Չաուշի), Տարոնեցու (Վարդան վարդապետի) հետ մի պահանջագիր ներկայացրեց Բիթլիսում երեք տերությունների (Անգլիայի, Ֆրանսիայի ու Ռուսաստանի) հյուպատոսներին, որի մեջ խնդիր դրեց՝ առաջարկել սուլթանին իրագործելու հետևյալ միջոցառումները. 1. վերացնել բոլոր բացառիկ ու ժամանակավոր հարկերը, աշարը (տասանորդը) ու իլթիզամը (հարկահավաքման իրավունքի վարձակալումը) և յուրաքանչյուր ընտանիքի համար սահմանել հողային կալվածքների միանվագ տուրք։ 2. Հայերին 10 տարով աղատել հարկերից, որ կարողանան դուրս գալ տնտեսական քայքայումից, վերացնել նրանց ապառքները, փակ այնուհետև տուրքերը չհավաքել զինվորների կամ ոստիկանների միջոցով։ Տեղական հարկերից գոյացած եկամուտները հատկացնել տեղական կարիքներին։ 3. Վերացնել զինվորական տուրքը կամ բեդելիե ասկերիեն, հայերին ևս զորակոչել բանակ և նրանցից կազմել առանձին գնդեր։ 4. Հայկական գյուղերի ապահովության համար նրանց բնակիչներից նշանակել 5—10 պահակ (նայած գյուղի մեծության), զինելով արագաձիգ հրացաններով։ 5. Զինաթափել մահմեդականներին, հակառակ դեպքում հայերին նույնպես իրավունք տալ զենք կրելու՝ ինքնապաշտպանության համար։ 6. Հայերին վերադարձնել նրանցից զավթած հողերը։ 7. Հաստատել սահմանադրական կարգեր՝ տալով դավանանքի, մամուլի ու խղճի ազատություն։ Ստեղծել անկաշկանդ երթևեկություն և առևտուր։ 8. Անցկացնել դատական բարենորոգումներ, ապահովելով բոլոր դասերի ու ազգերի հավասարություն։ 9. Պանդուխտներին թույլատրել վերադառնալ հայրենիք և հետ ստանալ իրենցից բռնագրաված հողերը։ 10. Ազատել քաղաքական բանտարկյալներին։ 11. Վերացնել քրդական հեծյալ ջոկատները, որոնք ի չարն են գործադրում իրենց իրավունքները կամ բարեկրթել դրանք։ Արգելել վրանաբնակ քրդերին՝ զավթելու հայոց արոտավայրերը կամ իրենց հոտերն արածացնելու նրանց տարածություններում։ 12. Հայկական վեց վիլայեթների համար նշանակել մի կառավարիչ, որը լինի քրիստոնյա և կառավարի «ազգաբնակության կողմե ընտրված խորհրդի աջակցությամբ»։ 13. Սահմանել եվրոպական խիստ հսկողություն հայկական վեց նահանգների վարչության վրա։ 14. Ինչպես շարքային, այնպես էլ սպա ժանդարմներին նշանակել ազգաբնակչության թվի համեմատ։ 15. Վերականգնել Սասունում ու Մշո դաշտում ավերված գյուղերը, հատուցել նրանց բնակիչների վնասները և վերադարձնել հափշտակված ունեցվածքը, այդ թվում նաև գյուղատնտեսական գործիքները[18]։

---

16 Մշակ, 17. VII. 1904։

17 ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1904, ց. 482, գ. 538, թ. 161։

18 Դրոշակ, 1904, № 8, էջ 105—106։

Երբ այս պահանջները համեմատում ենք Առաքելոց վանքի կռվի ժամանակ ներկայացրածների հետ, տեսնում ենք, որ երկուսն էլ ունեին դեմոկրատական բովանդակություն՝ ուղղված սուլթանական բռնապետության և տիրապետող ֆեոդալական կարգերի դեմ։ Բայց այս պահանջներն ավելի լայն խնդիրներ էին ընդգրկում և ավելի արմատական նպատակներ էին հետապնդում, քան Առաքելոց վանքի պահանջները։

Մենք չգիտենք այդ նոր պահանջները հասան սուլթանին, թե ոչ, սակայն կասկածից վեր է, որ նա մերժելու էր դրանք։

Համենայն դեպս, Անդրանիկը շարունակեց իր ֆիգայական կռիվները։ Նա որոշեց ամենից առաջ լուծել Քեռիի (Կուրավցի Քեռիի կամ քուրդ Բարսեղի) ու նրա զինակիցների վրեժը։

Քեռին ու իր զինակիցները, թվով վեց հոգի, Սասունի գոյամարտի պարտությունից հետո, խուսափելով համիդյան զինվորների հետապնդումներից, Կուրավու գյուղում փոս էին փորել ու թաքնվել մեջը։ Նրանցից մեկն անզգուշաբար ջրի դուրս գալով, հայտնաբերվում է սուլթանական զինվորների կողմից։ Իրենց պետի կարգադրությամբ զինվորները շրջապատում են փոսը և վեցին էլ գնդակահարում։ Անդրանիկը հուլիսի 15-ին 40 հոգով մեկնեց Կուրավու։ Բայց նրա դեմ դուրս եկան 80 համիդյան զինվոր և բազմաթիվ քրդական հրոսակներ։ Չնայած դրան, հայդուկապետը հանկարծակիի բերեց հակառակորդին, հինգ կողմից կրակ թափեց նրա վրա ու կես ժամվա ընթացքում շատերին կոտորեց։ Իմանալով այդ մասին, գազազած Ալայ բեյը ավելի մեծ ուժով է շարժվում Կուրավու և պաշարում այն։ Թեժ կռիվը շարունակվեց մինչև ուշ գիշեր, բայց սուլթանական ջարդարարները չկարողացան ներխուժել գյուղ։ Երբ գիշերը վրա հասավ, Անդրանիկը տեսնելով, որ անհնար է շարունակել կռիվը, ճեղքեց հակառակորդի պաշարումը և բարձրացավ Բրդակի սարերը։ Միայն լուսաբացին Ալայ բեյն իմացավ, որ հայդուկապետն անհետացել է։ Նա իր զայրույթը թափեց գյուղի անպաշտպան ու անմեղ բնակիչների վրա, կոտորելով ու թալանելով շատերին։

Շուտով Ալայ բեյը լուր ստացավ, որ Անդրանիկը հանգրվանել է Շեյխ-Յուսուֆում, Հուլիսի 17-ին նա շարժվեց դեպի այդ գյուղը և պահանջեց հանձնել Անդրանիկին ու նրա հայդուկներին։ Բնակիչները պատասխանեցին, որ իրենց մոտ հայդուկներ չկան, բայց տեսնելով, որ Ալայ բեյն անդրդվելի է, ոտքի կանգնեցին ու դիմադրավեցին նրան։ Կատաղի կռիվը տևեց մի քանի ժամ։ Թշնամին կարողացավ կոտրել գյուղացիների դիմադրությունը, և նրանց հետ արյունալի դատաստան տեսավ։

Այդ կռիվներից հետո Անդրանիկը, համոզվելով, որ իշխանությունները ներխուժում են հայկական գյուղերը և հետապնդում բնակիչներին, որ իր ներկայությունն ավելի շատ վնասում է նրանց, քան օգնում, որոշեց թողնել Երկիրն ու մեկնել արտասահման։ Նա հայդուկների մի մասին առաջարկեց մնալ Գյուզալդարայի, Ուլութափայի ու Նեմրութի սարերում, ոչ թե վարել ֆիգայական կռիվներ, այլ հետևել թաքցրած զենքերի պահպանմանը, իսկ մյուս մասին (շուրջ 120 հոգի) վերցրեց իր հետ և 1904 թ. օգոստոսին ուղղվեց դեպի Վան։ Բայց նոր էր հասել Շամիրամ, երբ Ալայ բեյն օգոստոսի 11-ին 158 զինվորներով ու քրդական հրոսակներով կտրեց նրա ճանապարհը, շրջապատեց հայդուկներին ու առավ կրակի տակ։ Սակայն Անդրանիկը կարողացավ վարպետորեն պաշտպանվել, հակառակորդին պատշաճ հակահարված տալ և, դուրս գալով օղակումից, Դատվանի վրայով մեկնեց Աղթամար։ Այստեղ նա մնաց յոթ օր։ Հայդուկների մի փոքր խմբի Գևորգ Չաուշի գլխավորությամբ ուղարկեց հետ՝ դեպի Տարոն, իսկ ինքը պատրաստվեց մեկնել Վան։ Դեռ չէր թողել կղզին, երբ թուրքական ջոկատները պաշարեցին այն և սկսեցին ռմբակոծել։ Երկու օր շարունակ թշնամու հրանոթային համազարկերը չէին դադարում։ Սակայն հայդուկապետը հնարամտորեն կարողացավ դուրս գալ նաև այս շրջապատումից, մեկնել Վան և հանգրվանել Այգեստանում։ Վանի կուսակալը, իմանալով այդ մասին, 400 զինվորներով պաշարում է Այգեստանը, կատարում խուզարկումներ, նույնիսկ ռմբակոծումներ, բայց չի կարողանում գտնել հայդուկներին։ Նրա այդ գործողու-

թյուններից ահաբեկված հայությունը գիմում է անգլիական, ֆրանսիական, ռուսական, ամերիկյան, պարսկական հյուպատոսներին ու փոխհյուպատոսներին և օգնություն խնդրում։ Հյուպատոսները, իսկ նրանցից հետո նաև Երամյան վարժարանի ուսուցիչները, Անդրանիկին խորհուրդ են տալիս հեռանալ Վանից, այլապես կլինեն կռիվներ ու մարդկային զոհեր։ Հայդուկապետն առանց այդ էլ ուզում էր դուրս գալ Վանից ու մեկնել Պարսկաստան։ Նրա հեռանալու ձգձգումը ոմանք բացատրում են նրանով, որ իբր Անդրանիկն ուզում էր Վանում ապստամբություն բարձրացնել Թուրքական իշխանությունների դեմ, բայց Անդրանիկը բացատրում էր նրանով, որ քրդական աշիրեթները դեռ գտնվում էին սարերում, կարող էին կռիվ սկսել, իսկ ինքը չուներ բավականաչափ զինամթերք, որ ընդուներ նրանց մարտահրավերը։ Այնուամենայնիվ, տեսնելով, որ դրությունը պայթյունավտանգ է, Անդրանիկն իր հայդուկներին բաժանեց առանձին խմբերի և Վանից դուրս գալով, նրանց հետ միասին մեկնեց Պարսկաստան[19]։

Թուրքական կառավարությունը, իմանալով այդ մասին, շահին առաջարկեց ձերբակալել նրան ու հանձնել իրեն, խոստանալով փոխարենը տալ իր կողմից հետապնդվող և Թուրքիայում ապաստանած Ջաֆարին։ Մինչ շահը կորոշեր իր անելիքը, հայերը հայդուկապետին փախցրին Բաքու, ուր նա մնաց շուրջ մեկ ամիս, ապա մեկնեց Թիֆլիս, իսկ 1905 թ. սկզբներին՝ արտասահման և հանգրվանեց Ժնևում։ Այստեղ նա «Դրոշակի» խմբագրությանը հանձնեց Բշարե Խալիլի շքանշանը, կնիքը և այն դաշույնը, որով գլխատել էր նրան[20]։

Սփվելով Ժնևի հասարակական-քաղաքական կյանքին, Անդրանիկը տեսավ, որ մարդիկ, հակառակ իր սպասածի, բոլորովին չեն հետաքրքրվում Հայկական հարցով։ Հետագայում նա հուշագրում էր. «Բախտ ունեցանք Եվրոպա տեսնելու։ Բայց ավելի լավ կհամարեի չտեսնել։ Հայկական հարցի վերաբերմամբ ոչ մի տպավորություն չթողեց ինձ վրա։ Միայն տեսանք ժողովրդի ազատությունը իր երկրի մեջ։ Ինքնասեր, իրենց հանգստությունը սիրող մարդիկ են, որոնք չեն օգներ եղբորը, ուր մնաց մեզի օգնել հեռվից»[21]։

1905 թ. մարտին Անդրանիկը մեկնում է Բուլղարիա և բնակվում Ֆիլիպե քաղաքում՝ Ռուբեն Զարդարյանի մոտ։ Այստեղ նա գրում է իր նշանավոր «Մարտական հրահանգները» և նվիրում իր անմոռանալի զինակիցների՝ Սերոբի, Վազգենի, Ապրոյի, Թաթուլի, Պետոյի, Հրայրի, Գուրգենի, Վահանի, Թորգոմի, Վաղարշակի և մյուսների հիշատակին։ Մեկ տարի հետո՝ 1906 թ. Ժնևում Անդրանիկը հրատարակում է այդ հրահանգներն առանձին գրքույկով, ուր հանգամանորեն շարադրում է հայդուկային պայքարի սկզբունքները, էությունն ու նպատակները։

«Մարտական հրահանգների» վերջում Անդրանիկն իր հայրենակիցներին է դիմում հետևյալ կոչով.

«Ամեն օր երևան եկած դեպքերն ու անոնց հայտնությունը՝ մեզի բացարձակորեն կսորվեցնեն թե հայը, ըլլա Տաճկաստան, ըլլա Կովկաս, Պարսկաստան կամ ուրիշ տեղ, իր կյանքը պահպանելու մեկ միջոց մը միայն ունի,

---

19 Հայրենիք, 1931, № 11, էջ 133, Հ. Երամյան, Հուշարձան Վան-Վասպուրականի, հ. Բ, Աղեքսանդրիա, 1929, էջ 43—46։

20 Պարսկաստանում Անդրանիկը տեղի դաշնակցական կոմիտեի ղեկավար Սամսոն Թադևոսյանի խնդրանքով (սա Քրիստափոր Միքայելյանի ազգականն էր) լուսանկարվեց։ Լուսանկարում հայդուկապետը նստած է սպիտակ ձիու վրա, ձախ ձեռքով բռնել է սանձը, իսկ աջով՝ դեպի երկինք ուղղված հրացանը, կողքին կախված է դաշույն, իսկ կրծքին ամրացված է շքանշան։ Անդրանիկի այդ լուսանկարը հայտնի է շատերին, բայց քչերը գիտեն, որ դա այն դաշույնն է, որով նա գլխատել է Բշարե Խալիլին, իսկ շքանշանն այն շքանշանն է, որով սուլթանը պարգևատրել էր ոճրագործին՝ Աղբյուր Սերոբին սպանելու համար։ Անդրանիկը Խալիլին գլխատելիս, վերցրեց նրա շքանշանը և փակցրեց իր կրծքին, գտնելով, որ նմանը պարգեի ինքն է արժանի, և ոչ Խալիլը, քանզի ինքն է կատարել արդար գործ, ոչ թե նա։

21 Անդրանիկի հուշերը, էջ 445։

մեկ պաշտպան մը, այն ալ զենքն ու զինավարժությունն է։ Մարդ ոչ հերոս, ոչ ալ կռվող կը ծնի, զենքն է, որ մարդուն կռվելու ընդունակություն կուտա և դիմադրության ոգի անոր մեջ։ Անոնք, որ կսպասեն՝ թե մեր նոր սերունդները առանց զենքի ընտելանալու, առանց զինավարժությամբ պարապելու՝ վաղը կռվողներ պիտի դառնան՝ տղայական միամտությունին է, որ կհայտնեն, ուրիշ ոչինչ։ Այդ կերպով եթե դարեր ալ սպասենք, նորեն երկչոտներ, ստրուկներ պիտի մնանք, և նորեն մեր կյանքն ու պատիվը պիտի ըլլան օտարի ձեռքին խաղալիք։

Ես չեմ, որ կհրավիրեմ ձեզ, արտասահմանյան հայ երիտասարդներ, այլ դժբախտ հայրենիքին հողն ու քարը իրենց արյունով ներկած մեր նահատակներն ու պաշտելի հերոսներն են, որ կոչ կընեն ձեզի՝ զենքի, զինավարժության և վրեժխնդրության։ Լսեցեք անոնց ձայնը, որ մեր կյանքին ձայնն է»[22]։

Անդրանիկի այս կոչը, որ կարևոր նշանակություն ուներ անցյալի համար, հանգամանքների բերումով պահել է իր թարմությունը և մեծ հնչեղություն ունի նաև մեր օրերի համար։

Բնակվելով Եվրոպայում, Անդրանիկն ավելի մոտիկից ճանաչեց մեծ տերությունների շահամոլ քաղաքականությունը և հիասթափվելով նրանցից, հայության փրկությունը սկսեց որոնել նրա համախմբման ու միասնության մեջ։ 1906 թ. Ֆիլիպե քաղաքում նա հրապարակեց «Կոչ բոլոր հայ հեղափոխական զինվորներուն», որի մեջ ներկայացրեց Հայաստանի վիճակը, ցույց տվեց, որ այն ավելի է վատթարանում հայերի անմիաբանությամբ, իրար նկատմամբ ատելության ու թշնամության հետևանքով։ Մենք ապրում ենք այնպիսի ժամանակներ, նշում էր նա, երբ հայերն իրար են կոտորում. մշեցին՝ բոլանցիները, ալանեցիները՝ դրսեցիներին, դաշնակցականները՝ հնչակյաններին և այլն։ Անհրաժեշտ է սթափվել, քանի դեռ եղբայրասպան կռիվները մեծ չափերի չեն հասել։ Նա ցույց էր տալիս, որ «Թշնամին թողուլ և ներքին մանր-մոնր հաշիվներով զբաղվիլ՝ ոճիր է, հայրենիքի մահն է»։ Ուստի դիմում էր բոլոր կուսակցություններին ու հեղափոխականներին, անկախ նրանց սկզբունքներից ու դավանանքներից, սթափվել, համախմբվել, սեղմել շարքերը, քանզի ազատության գործը շատ դժվարին է, այն կարոտ է մեծ ուժերի։ «Ազգովին քով քովի գանք և այդ մեծ ուժը կազմենք...՝ զորացնենք մեր կամքը և վստահ ըլլանք, որ կփրկվինք»,—նշում էր նա։

Անդրանիկը հույս էր տածում, որ իր կոչն արձագանք կգտնի ամեն մի հայդուկի, ամեն մի հայի մեջ, որ նրանք մի կողմ կդնեն անձնականը, «ես»ը և իրենց ամբողջ ուշադրությունը կդարձնեն «Թշվառ ժողովրդի դատին վրա»։ Նա ցույց էր տալիս, որ հայությունը մեկ է՝ «ըլլա Կովկաս, թե Տաճկահայաստան», ունի համընդհանուր ազգային շահ։ Հետևաբար յուրաքանչյուր հայ պիտի փոթա այնտեղ, որտեղ սկիզբ է առնում ազգի վտանգը, պիտի մաքառի այդ վտանգի դեմ՝ «ինչով, ինչ միջոցով որ կարող է»[23]։

Հայդուկապետի այդ կոչը, որքան էլ տեղին էր ու ժամանակին, դժբախտաբար չունկնդրվեց հայ հասարակական քաղաքական տարբեր խմբավորումների կողմից։ Ընդհակառակը, նրանցից շատերն ավելի հեռացան իրարից ու մերձեցան թուրքական քաղաքական շրջանների հետ, ենթադրելով, որ արևմտահայության փրկությունը կարող է տեղի ունենալ համաօսմանյան հեղափոխության իրագործման ճանապարհով։

Արդ, Անդրանիկը դեմ չէր ժողովուրդների համագործակցությանը. ընդհակառակը՝ կարծում էր, որ դա նույնիսկ անհրաժեշտ է, բայց հայ-թուրքական կամ հայ-քրդական տվյալ հարաբերությունների պայմաններում հարուց էր անիրագործելի։ Հայդուկապետի կարծիքով քրդերը կմերձենային հայերին. եթե սուլթանական կառավարությունը նրանց սանձահարեր, արգելեր հայերի հանդեպ գործադրվող բռնություններն ու հարստահարում-

---

22 Մարտական հրահանգներ, ժնև, 1906, էջ 78։

23 Ռազմիկ, 20. IX. 1906։

ներ։ «Երբ նրանք կարող են ազատ թալանել,— ասում է Անդրանիկը,— առևանգել, սպանել՝ ինչո՞ւ պետք է միանան իրենց զոհերի հետ»[24]։ Հայդուկապետն անիմաստ էր համարում հայերի կողմից քրդական որևէ ցեղի կառավարության դեմ գրգռելը և իրենց կողմ թեքելը։ Այդպիսի դեպքում իշխանությունները ոտքի կհանեն ըմբոստացողների թշնամի քրդական ցեղերին և հաշվեհարդար կտեսնեն նրանց հետ։ Այդուհանդերձ հայդուկապետը սկզբունքային նշանակություն էր տալիս հայ-քրդական համագործակցությանը, նշելով, որ եթե մենք կարողանանք քրդերին միացնել մեզ և նրանք մեզ հետ գործեին, «այն ժամանակ ինչքան կուզե՝ թող կառավարությունը գա մեր վրա»[25]։ Բայց քրդերը մեզ չեն միանա, նրանք «այդ չեն անի»[26]։

Անդրադառնալով թուրքերին, Անդրանիկը գտնում էր, որ լավ կլիներ, եթե հայերը կարողանային նրանց հետ դաշնակցել և պայքարել կառավարության դեմ։ Բայց միաժամանակ նա նշում էր, որ թուրքերը նույնպես այդ չեն անի, որ հայերը չեն կարող «թուրքերի մեջ հաջողություն ունենալ»[27]։ Հայդուկապետը համամիտ էր նրանց հետ, որոնց կարծիքով «թուրքի մեջ ատելությունը դեպի քրիստոնյաները դեռ զորեղ է և կարող է ամեն րոպե պայթել»[28]։ Մոտիկից շփվելով թուրք հասարակական քաղաքական գործիչների հետ, Անդրանիկը չէր հավատում նրանց կեղծ ժպիտներին, նենգ կոչերին ու խոստումներին և իր կուսակիցներին ու հայրենակիցներին խորհուրդ էր տալիս չխաբվել նրանց շողոքորթություններով, չպատասխանել «մերկ, միամիտ, անխոհեմ և վտանգավոր անկեղծությամբ»[29], միշտ զգաստ լինել և գտնվել թուրքերի հանդեպ մարտական դիրքերում։ Ֆրանսիացի անվանի գրող Ռոմեն Ռոլանը իր նշանավոր «Ժան Քրիստոֆում» խոսելով սիրո մասին, ասում է. «Ատելություն էլ կա, որ առողջ հոգու բնազդն է։ Նա զգում է թշնամուն և պաշտպանվում»։ Այդպիսի առողջ հոգի էր Անդրանիկը, որն իր բնատուր հատկությամբ կարողանում էր մարդուն տարբերել մարդակերից և ըստ արժանվույն հատուցել նրանց։

Անդրանիկը վերլուծում է նաև հայ ազգային ուժերի հարաբերությունները և կանգնում անզիջում դիրքերում։ Նա, օրինակ, 1907 թ. դաշնակցության Վիեննայի համաժողովում համառորեն մերժեց այդ կուսակցության «Կովկասյան նախագիծը», այն համարելով դավաճանություն թուրքահայ դատին։ Խ. Մալումյանի այն հայտարարությունը, թե մի քանի հոգու դիմադրության պատճառով ժողովը ձգձգվում է, Անդրանիկը պատասխանեց. «Արյուն ձեր ի գլուխ ձեր։ Երեք՝ ինչ որ կուզեք, բայց Ռուսիո դոները մեզի դեմ մի փակէք։ Մենք շատ թշնամի ունինք արդեն, Ռուսիան ալ թշնամի մի ըրեք մեզ...»[30]։ Շուտով նա մեկնեց Վառնա, նամակ ուղարկեց Ժնև, ուր հրատարակվում էր «Դրոշակը», և հրաժարվեց դաշնակցությունից։ Իր հուշերում նա գրում էր. «Ես դաշնակցութենեն քաշած եմ 1907 թվականին»[31]։ Կուսակցության Ժնևի և Թիֆլիսի բյուրոները ներկայացուցիչներ ուղարկեցին Վառնա, որոնք փորձեցին Անդրանիկին հետ պահել այդ քայլից, բայց նա մնաց անդրդվելի։ Հետագայում հայդուկապետի զայրույթը դաշնակցության հանդեպ ավելի մեծացավ, երբ լսեց, որ այն համերաշխության ու համագործակցության դաշն է կնքել երիտթուրքերի հետ[32]։

---

24 Ա. Զելեպյան, Զորավար Անդրանիկ և հայ հեղափոխական շարժումները, Լոս Անջելես, 1984, էջ 234։

25 Նույն տեղում։

26 Նույն տեղում, էջ 235։

27 Նույն տեղում։

28 Նույն տեղում։

29 Նույն տեղում։

30 Զորավար Անդրանիկ կպատասխանե իր հակառակորդներուն, Փարիզ, 1945։ էջ 19։

31 Նույն տեղում, էջ 20։

32 Ազդ, 28. VI. 1908։

Անդրանիկն օժտված էր քաջությամբ ու վճռականությամբ, կարողանում էր արագ ու ճիշտ կողմնորոշվել հանգամանքներում, անսպասելի հարվածել թշնամուն ու անհետանալ, հռչակվել էր իր սխրագործություններով և դարձել անորսալի։ Հայդուկապետը ջերմորեն սիրում էր իր ժողովրդին և անսահման ատում նրա թշնամիներին, համառորեն պայքարում էր հայության պաշտպանության ու ազատագրության համար, կանգ չառնելով նույնիսկ ամենաթանկագինի՝ կյանքի զոհաբերման առաջ։ Շնորհիվ ժողովրդանպաստ գործունեության նա դարձել էր հայության սիրելին, նրա հերոսը. գովերգվելով ու փառաբանվելով հայ բանաստեղծների, գրողների ու հրապարակախոսների ստեղծագործություններում։ Անդրանիկը դրվատում էր հայրենասիրությունն ու մարդասիրությունը, ազնվությունն ու շիտակությունը. գարշում էր ստից ու երկերեսանությունից, չէր հանդուրժում դավաճանությունը և պատժում էր մատնիչներին։ Իր անձնական օրինակով նա դաստիարակեց բազմաթիվ երիտասարդներ, որոնք հետագայում կարևոր դեր խաղացին ոչ միայն հայ ֆիդայական շարժման մեջ, այլև ցեղասպանության դեմ մղված պայքարում։

ГАЙДУК АНДРАНИК
(к 125-летию со дня рождения)

А. С. АМБАРЯН

Резюме

Андраник Озанян вступил в гайдукское движение с начала 1890-х годов, а с 1900 г. стал одним из его руководителей. Своей упорной и последовательной борьбой, направленной против султанского режима, он облегчил положение крестьянства в ряде районов Тарона и способствовал росту национально-освободительного движения западных армян. С конца 1904 г. Андраник вынужден был покинуть Западную Армению и переехать в Европу. Он воспитал целую плеяду гайдуков, которые играли важную роль в борьбе против турецких погромщиков.

HAIDOOK ANDRANIK
(on tis 125th birth anniversary)

A. S. HAMBARIAN

Summary

Andranik Ozanian joined the Haidook movement in early 1890 s and since the 1900-s became one of its leaders. His consistent and unswerving struggle against the Sultan rule relieved. the situation of the peasantry in a number of regions of Taron and promoted the growth of the national-liberation movement of the Western Armenians. Since late 1904 Andranik was forced to leave Wastern Armenia and move to Europe. He had educated a hole pleiad of Haidooks who played an important role in struggle against the Turkish looters.